ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ԵԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.05.2019թ.
ժամը 14[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ներկայացված ճշտված եզրակացությունը քննարկելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեյից ներկայացված եզրակացությունը քննարկելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 Քանի որ 17.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության ճշտված տարբերակը, համաձայն որի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ոչ թե 3000 ՀՀ դրամ, այլ 1000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք չեն գերազանցում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող, չեղյալ համարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2019թ. կայացրած 1-ին, 2-րդ և 3-րդ որոշումները:
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:
1.2 17.05.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:
1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուստյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան